**8. Ընդհանուր պայմաններ**

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելուց հետո: Կողմերից յուրաքանչյուրը կարող է պայմանագիրը լուծարել՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր զգուշացնելով մյուս կողմին:

8.2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ կից փաստաթղթերն իրավաբանական ուժ ունեն, եթե դրանք ստորագրված կնքված են ԱՐՄԻՆԿՈՒ եւ Բաժանորդի կողմից:

**9.Պայմանագրի ժամկետը**

9.1. Սույն ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ կնքվում է սույն ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 9.2. կետում նշված ժամկետով և կարող է երկարացվել կամ փոփոխվել կողմերի համաձայնությամբ: ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ուժը չի կորցնում կողմերի վավերապայմանների փոփոխության, կողմերի հիմնադիր փաստաթղթերի փոփոխման, սեփականատիրոջ փոփոխման, կազմակերպական ձևի փոփոխության դեպքում: Սույն պայմանագրի 9.2. կետում սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե կողմերը գրավոր չեն հայտնում պայմանագիրը դադարեցնելու մտադրության մասին, ապա պայմանագիրը երկարացվում է 9.2. կետում նշված ամսաթվերի տարբերության օրերի քանակին հավասար ժամկետով:

9.2. Պայմանագրի գործելու տևողությունը

Պայմանագիրը կնքվում է անժամկետ, և ուժի մեջ է սույն պայմանագրի դրույթները ԱՐՄԻՆԿՈՒ և ԲԱԺԱՆՈՐԴԻ կողմից կատարման պարագայում:

9.3. Բոլոր նախնական պայմանավորվածությունները, գրագրությունը և նախապայմանագրային պայմանները այս պայմանագրի առարկայով չեղյալ են համարվում այս ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ուժի մեջ մտնելուց հետո:

**10. Այլ պայմաններ**

10.1. Եթե ԲԱԺԱՆՈՐԴ-ը կամ երրորդ կողմը ԲԱԺԱՆՈՐԴ-ի կոմունիկացիոն սարքի օգտագործման հետևանքով անընդհատ զանգվածային տեղեկատվության փոխանակում է իրականացնում, ինչը կարող է էականորեն ծանրաբեռնել միջազգային համակարգչային ցանցի աշխատանքը կամ սպառնալ այդ ցանցի անխափան աշխատանքին, ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը կամ համակարգչի աշխատունակությանը, ԱՐՄԻՆԿՈՆ իրեն իրավունք է վերապահում դադարեցնել ծառայությունների մատուցումը մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը:

**11. Կողմերի իրավաբանական տվյալները**

| ԱՐՄԻՆԿՈ ՍՊԸ | ԲԱԺԱՆՈՐԴ | |
|---|---|---|
| ք.Երևան, Մաշտոց 51 (Իրավաբանական հասցե) | Իրավաբանական հասցե | ք.Երևան, Հր. Քոչար 4 |
| ք.Երևան, Իսահակյան 28 (Գործունեության հասցե) | Գործունեության հասցե | ք.Երևան, Հր. Քոչար 4 |
| Հեռ՝ 060270000 | Հեռ. / Ֆաքս | |
| ՀՎՀՀ 01501597 | ՀՎՀՀ (ֆիզ. անձանց՝ անձնագրային տվյալներ) | 00259325 |
| Հ/Հ 1570005315720100 "Ամերիաբանկ" ՓԲԸ | Հաշվարկային Հաշիվ | ՀՀՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011500049 |
| E-Mail: support@arminco.com | E-Mail: | karapetyansiran@mail.ru |

ԱՐՄԻՆԿՈ

*"ԱՐՄԻՆԿՈ" ՍՊԸ*

*տնօրեն*

*Ա.Ներսիսյան* ______________________

(ստորագրություն)

Կ.Տ.

ԲԱԺԱՆՈՐԴ

*ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմ*

*աշխատակազմի ղեկավար*

*Հ.Աբրահամյան* ______________________

(ստորագրություն)

Կ.Տ.